

իրենց ամբաստանութիւնը ամենախայտա-
ռակ ստուծիւն մըն էր, իրականութենէ
բոլորովին հեռու: Դժբախտաբար լատի-
նամերձները, մեզեալ բոլորովին տարբեր
ցանկութիւններէ, ոյժ կուտային եւ ար-
ձագանդ կ'ըլլային Յակոբ Դ-ի Հոովմ
երթալ ցանկալուն եւ կամ փորձելուն
անճշդութեան: Լատինամերձներուն մէջ
կային անոնք որոնք անձնական շահ մը
ապահովելու նպատակաւ կը տարածէին
այս ստուծիւնը: Անոնք կը խորհէին որ
այսպիսով Հոովմի մէջ իրենք պիտի ըս-
տանային «բարենիշ» մը եւ պիտի յաջո-
ղէին իրենց ապահովել ձրի եւ անվաս-
տակ կեանք մը: Իսկ մաս մըն ալ կը
խորհէր նման տարածայնութիւններով
«համոզել» Հայերը հաւատարմութեան
եւ զանոնք Հոովմէական Եկեղե-
ցիին հպատակեցնել: Ինչ որ ցաւալի է
այն է որ Հոովմի մէջ երբեմն զոհ կ'եր-
թային հաւատք ընծայելով այդ ստապա-
տում լուրերուն, առանց իրապաշտօրէն
խորհելու որ Կաթողիկոսի մը կամ կա-
թողիկոսներու հաւատարմութիւնը
պիտի չբաւէր ամբողջ հայութեան Հոով-
մէական դառնալուն: Այս պատճառաւ
երբեմն անհիմն սուտ լուրերուն Հոովմի
մէջ պաշտօնական ընդունումը կրնար
լուրջ վտանգի ենթարկել Յակոբ Դ-ը, եւ
իր մատնիչներուն գործը մեծապէս հեշ-
տացնել, Կաթողիկոսին բանտարկութեան
կամ նոյն իսկ մահուան պատճառ ըլլա-
լով:

Հետզհետէ պիտի ցոյց տամ այն
զղուելի պայքարը որ կը մղուէր Յակոբ
Դ-ի դէմ ըլլայ բուն իր թշնամիներէն,
ըլլայ լատինամերձ շահադէտներէ: 1666-
ին Հայ Եկեղեցւոյ անորակելի «վարդա-
պետ» մը չէր քաջուէր ստորնագոյն մի-
ջոցներու ղիմել Յակոբ Դ-ի հետ իր հա-
շիւը մաքրելու համար: Իր ամբաստա-
նագիրը սուտի եւ քսութեան զգրելի օ-
րինակ մըն է զոր պիտի տանք քննար-
կութեամբ միասին:

Յակոբ Կաթողիկոս բուն եւ կոր-
ծանիչ պայքարի մը բռնուեցաւ Եղիազար
Այնթապցիի հետ որ Սոոյ Կաթողիկոս ու
Երուսաղէմի Պատրիարք եղաւ: Այս
պայքարին մասին շատ բան կայ գըր-
ուած: Իմ նպատակս հոս տալ է ինծի

ծանօթ ժամանակակից վաւերագրու-
թիւնները այդ մասին, եւ անոնց լոյսով
առաջնորդուած հասնիլ եզրակացու-
թեանց:

Առաջին վաւերագրութիւնը⁽⁶⁾ Դըլմաիկ
կոչուած Սահակ վարդապետին գիրն է
ուղղեալ Յակոբ Կաթողիկոսին:

«Դիտութիւն տէրութեան քում եղի-
ցի հայր սուրբ, զի մէք Մեծ Պահոց ա-
ռաջի երեքշաբթի աւուրն եղաք ի Սթամ-
պօլու եւ զՏեառնընդառաջն ի Պօլիս քա-
ղաք արարաք. ութ օր ի տեղն նստեցաք,
քանզի այս էր պատճառ, զի յորժամ
պատերազմեցաք մէք ընդ Երուսաղէ-
մացոյն ընդ զՅովսէփին եւ զԲօմուր-
ճիւն եւ այլ բազմամբոխ ժողովրդեանն
միայն մնացաք, ի սեւազլխոցն ոչ ոք ե-
ղեւ մեզ օգնական, զի անիծեալ տէլի
Պիշազարն երկարնակ եղեւ ամենեւին ոչ
հաղորդեցաք ընդ մեզ, եւ օխուսնին
ի Պուրսա փախաւ, եւ Քացխուկն ոչ այս-
պէս եւ ոչ այնպէս դիտելով կատարածին:
Այլ մէք տկարքս աղօթիւք սուրբ հօրդ
պատերազմեցաք ընդ հզօրսն, որք ապա-

(6) Այս ստայօդ տարածայնութիւններն էին
որ հասեր էին Անգլիացի հեղինակ Բօլ
Ռայգօթի ականջը որ զայն հրատարակած էր
անգլիերէն, եւ քարգ. Փրանսերէն M. Le Che-
valier Ricaut «Histoire de L'Etat present de l'Eglise Greque et l'Eglise Ar-
menienne: (Trad. de l'angl.) Middel-
bourg 1692 p. 422. Ռայգօթ հեղինակն է բազ-
մաքի հատորներու որոնք գրուած են Օսմանեան
պատմութեան եւ Սուլթաններուն մասին, որոնք
ունին հաւաքածոյիս մէջ: Իր աշխատութիւնները
շատ անգամ մանրամասն եւ շահեկան, երբեմն
կարիք ունին ճշդումի: Կ'երեւայ թէ Զուլայեցիի
(գոր միայն իբր Հայոց Կաթողիկոս կը ճանչնայ
եւ կ'անուանէ) մասին իր Հայ աղբիւրներէն ինչ
որ իմացեր է առանց ստուգելու կամ ճշդելու
հրատարակեր է վերոյիշեալ գործին մէջ: Ասկէ
է որ Լէօ եւ ուրիշներ, յառաջ ու բուն աղբիւրէն
եւ իրարմէ անելով, հրատարակեր են այս ստա-
պատում լուրը: Բօլ Ռայգօթի ինքնութեան եւ
անուան մասին եղած առտարոց սխալագրութիւնը
ունանց գործածած աշխատութեանց մէջ ծիծաղելի
ըլլալէ աւելի ողբալի են: Աւելորդ կը սեպեմ այդ
տղայական ճշդումներով հոս գրադիլ: